# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 մարտի 2025 թվականի N 252-Ն

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 2060-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներին, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակում կատարել վերաբաշխում, N 3 աղյուսակում կատարել փոփոխություններ և լրացումներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշման NN 3, 4, 5, 9, 9.1 և 10 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահին՝ սույն որոշմամբ հատկացվող գումարները վճարել հետևյալ պայմանագրերի շրջանակներում կապալառուների կողմից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 25-ը ներկայացված կատարողական ակտերի դիմաց, մասնավորապես՝

1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման նպատակով 2021 թվականի հունվարի 20-ին կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 կապալային աշխատանքների կատարման պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարած «ՆԱՐ-ԴԱՎ ՇԻՆ» ՍՊԸ-ին տրամադրել 35,684,571.00 դրամ գումար.

2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փշատավանի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի վերակառուցման նպատակով 2022 թվականի ապրիլի 4-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/18 կապալային աշխատանքների կատարման պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարած «ԼԱՅՆ ԱՓ» ՍՊԸ-ին տրամադրել 16,090,243.00 դրամ գումար.

3) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի N 8 հիմնական դպրոցի մարզադահլիճի վերակառուցման նպատակով 2022 թվականի ապրիլի 4-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/18 կապալային աշխատանքների կատարման պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարած «ԼԱՅՆ ԱՓ» ՍՊԸ-ին տրամադրել 17,873,634.00 դրամ գումար.

4) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի ավագ դպրոցի մարզադահլիճի կառուցման նպատակով 2022 թվականի սեպտեմբերի 14-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/4 կապալային աշխատանքների կատարման պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարած «Խապարտշին» ՍՊԸ-ին տրամադրել 5,142,745.00 դրամ գումար.

5) Երևանի հ. 136 հիմնական դպրոցի մարզադահլիճի վերակառուցման նպատակով 2022 թվականի ապրիլի 1-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/15 կապա-

լային աշխատանքների կատարման պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարած «Տ-ՔՆՍՏՐԱՔՇՆ» ՓԲԸ-ին տրամադրել 6,098,574.00 դրամ գումար.

6) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի վերակառուցման նպատակով 2022 թվականի ապրիլի 17-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/16 կապալային աշխատանքների կատարման պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարած «Տ-ՔՆՍՏՐԱՔՇՆ» ՓԲԸ-ին տրամադրել 16,236,848.00 դրամ գումար:

Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին թույլատրվում է սույն կետով նախատեսված վճարումները կատարելու նպատակով վերը նշված պայմանագրերում կատարել ծավալների ավելացում և/կամ փոխարինում այլ բնութագրեր ունեցող աշխատանքներով և այդ փոփոխությունները տարածել մինչև այդ պայմանագրերով սահմանված աշխատանքների կատարման ժամկետների ավարտը առկա իրավահարաբերությունների վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ